բերած ըլլան, և Յունաստանէն՝ Եւրոպիոյ ազնուականաց բուրաստաններու մէջ թափառած ըլլայ և փասիս գետին բնիկ ըլլալով՝ անոր կոչուած է փասիան:

Ըստ ոմանց Խորենացւոյ Հաւ դեղջուկ անունամբ յիշատակած թռչունն կը գուշակուի փասիանն ըլլալ:

Կը թողումք տուն հաւազգի թռչունները, կ'անցնիմք սակաւ ինչ ուշադրութիւննիս դարձընելու հայրենեացս ամենէն սիրելի բարձրասրուն թռչնոց վրայ:

Ճուտ մը Արօսն մէջ տեղ կը նետուի, իւր տոորիկ ձայնով զիս գիտցէք կ'ըսէ:

Արօս. այս թռչունը չունի այն գեղեցիկ ոսկեփետուր պատմուճանը որով, զարդարուած են վերոյիշեալ գուռզ հաւերն. մելամաղձիկ է նորա տեսքն, բնութիւնը վայրագ: Սիրած է սա մեր երկրի ամէն գաւառները և աւելի կ'ախորժի բնակիլ ի Կարին, Մուշ, Սեբաստիա, Տիգրանակերտ, Վան, յԱրցախ, բայց ըստ Շանարի՝ Եւրոպացի հետազօտքիր ճանապարհորդին՝ ամենաառատ է Կողբայ կողմերը:

Ըստ զանազան գաւառաց՝ հայրենակիցք զԱրօս մերթ կը կոչեն Որորիկ, վասն զի թռչելու ժամանակ իւր անուան նման շառաչ կը հանէ, իրարու բախելով գեղնորակ խարտեաշ թեւերը. մերթ Արօս կը կոչուի, վասն զի միշտ արօս կոչուած մոլախոտից մէջ կը կենայ:

Ճարպայարեցի

## ՄԱՅՐՆ ԻՄ

1. Ո՞ ի քընքուշ իւրոց կըրծոց ինձ ջամբեաց,
Ու տայր հանգչիլ ինձ ի վերայ իւր բազկաց.
Ստէպ համբուրիւ գըգուեալ ի մէջ իւր գըրկաց.
Մայրն իմ:

2. Երբ յաչացըս անուշարար քուն մեկնէր,
Ո՞ էր նա որ օրօրոց երգ ինձ երգէր.
Ու գըգուանօք պահել զիս լուռ աշխատէր.
Մայրն իմ:

3. Երբ նընջէի յանկողնի իմ մանկութեան,
Ո՞ նստէր և հըսկէր գըլխոյս մանկական,
Որոյ աչաց թորէր արտօսր սիրական,
Մայրն իմ:

4. Երբ խօթութիւն կամ ցաւ տայր ինձ լինել լաց,
Ո՞վ մունջ յառեալ կայր ծանրացեալ իմ աչաց,
Ու լայր թէ մի՛ գուցէ զրաւիմ ի կենաց.
Մայրն իմ:

5. Ո՞ ցանկայր զիս գուարթ 'ւ ուրախ տեսանել,
Ու զուարճանայր ցանգ ինձ խաղալ ցուցանել,
Ու միտ դնէր երբ ունէի ինչ ասել.
Մայրն իմ:

6. Ցանկանելն իմ ո՞ վազէր ինձ յօգնութիւն,
Ու պատմէր ինձ ախորժական պատմութիւն,
Կամ համբուրիւ ցաւոցըս տայր դիւրութիւն.
Մայրն իմ:

7. Ո՞ աղօթել շըրթանցս ուսոյց մանկական,
Ու զԱստուծոյ պաշտել սուրբ օր և զմատեան,
Ու եցոյց ինձ զախորժ շաւիղ գիտութեան.
Մայրն իմ:

8. Ի պարտուցըս երբէք մա՞րթ է ինձ շեղիլ՝
Սիրալիր և գըթած առ քեզ չըլինել,
Առ քեզ՝ որում քաղցր էր այդչափ զիս սիրել.
Մայրդ իմ:

9. Ա՛հ ո՛չ. խորհել այդպիսի բան չըկարեմ,
Ու թէ Աստուած խնայէ յիս որ ծեզ ապրիմ՝
Փոխարինել քո խընամոց յոյս ունիմ,
Մայրդ իմ:

10. Երբ աւուրք քո ծաղկեալ ալեօք հընանան
Տըկար մարմնոյդ բազուկս առողջ յենարան
Լիցի, ու զցաւ քո մեղմել եմ պարտական,
Մայրդ իմ:

11. Ու երբ ըզքեզ տիսից գըլուխ վայր կախել,
Առ քեզ կացեալ իմ է յայնժամ կարգ հըսկել,
Ու ի տես քո գորովաբար արտասուել,
Մայրդ իմ:

12. Զի Աստուծոյ, որ ի յերկինս բնականայ,
Ցասուցեալ աչք վրէժխընդրութեամբ ցոլանայ,
Նթէ երբէք զքեզ անարգել եմ վըստահ,
Մայրդ իմ:

Սուրատպայա
Մայիս, 1897

Թարգմ. յանգլիականէ
Յ. ՏէՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ



digitised by A.R.A.R.@